06 JUN 2009

Մ. ՁՄՅԿԵԱՆԻ

# ՏԱՐԵՑՈՅՑ 1910 Թ.



ՎԵՀԱՓԱՌ Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

059
9-70

1909

## ՄԵՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1) | Քաղքի ադաթ (սպառուած) տպ. | 1869 | թ. | 15 կ. |
| 2) | «[illegible]» օրացոյց | 1888 | թ. | 15 » |
| 3) | — — | 1889 | » | 15 » |
| 4) | — — | 1890 | » | 15 » |
| 5) | — — | 1891 | » | 15 » |
| 6) | — — | 1892 | » | 15 » |
| 7) | — — | 1893 | » | 15 » |
| 8) | — — | 1894 | » | 15 » |
| 9) | — — | 1895 | » | 15 » |
| 10) | — — | 1896 | » | 15 » |
| 11) | — — | 1897 | » | 20 » |
| 12) | — — | 1898 | » | 20 » |
| 13) | — — | 1899 | » | 20 » |
| 14) | — — | 1900 | » | 20 » |
| 15) | — — | 1901 | » | 20 » |
| 16) | — — | 1902 | » | 20 » |
| 17) | — — | 1803 | » | 20 » |
| 18) | — — | 1904 | » | 20 » |
| 19) | — — | 1905 | » | 20 » |
| 20) | — — | 1906 | » | 20 » |
| 21) | — — | 1907 | » | 20 » |
| 22) | — — | 1908 | » | 20 » |
| 23) | — — | 1909 | » | 30 » |
| 24) | — — | 1910 | » | 20 » |
| 25) | «Պատկերազարդ» | 1889 | » | 30 » |
| 26) | — — | 1891 | » | 30 » |
| 27) | — — | 1892 | » | 30 » |
| 28) | — — | 1893 | » | 30 » |
| 29) | — — | 1894 | » | 30 » |
| 20) | — — | 1895 | » | 30 » |
| 31) | — — | 1896 | » | 30 » |
| 32) | — — | 1897 | » | 30 » |
| 33) | — — | 1898 | » | 30 » |
| 34) | — — | 1899 | » | 30 » |
| 35) | — — | 1900 | » | 30 » |
| 36) | — — | 1901 | » | 30 » |
| 37) | — — | 1902 | » | 30 » |
| 38) | — — | 1903 | » | 30 » |
| 39) | — — | 1904 | » | 30 » |
| 40) | — — | 1905 | » | 30 » |
| 41) | — — | 1906 | » | 30 » |

„ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ—ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ"

# ՏԱՐԵՑՈՅՑ

# 1910

ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ



ՔՍԱՆԵՒԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

ՄԱԿԱՐ ՋՄՇԿԵԱՆԻ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Տ. Մ. Ռոտինեանցի
1909

ԳՐԱԴԱՐԱՆ
ГАЗЕТЫ „МШАКЪ"
ТИФЛИСЪ

17.07.2013

’Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍԻ Բ.

Ազգնուիր և Սրբազնագոյն Կաթողիկոս Ամենայն Հայոց։

—

Ի ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ Տ. Տ. ՍԱՀԱԿ՝ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ։

Ի Պատրիարքութեան Հայոց Երուսաղէմի Ամենապատիւ Տ.

ՅԱՐՈՒԹԻՒՆ Բարձր-սրբազան Արքեպիսկոպոսի։

Եւ

’Ի Պատրիարքութեան Հայոց Կ. Պօլսոյ Ամենապատիւ Տ. ԵՂԻՇԷ

Բարձր-սրբազան Արքեպիսկոպոսի։

---

# ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Սոյն 1910 Թ. «Տարեցոյցը» հրատարակելով, պատիւ ունիմ յայտնել յարգելի ընթերցողներեդ, որ ինչպէս սոյն աշխատութիւնս, այնպէս նաև 1888 Թ. սկսած մինչև այժմս իմ հրատարակած «Ծաղիկ», «Տարեցոյց» (սեղանի), «Ծիածան» (պատի) և ռուսերէն լեզուով ,,Армянскій календарь съ предсказаніями‘‘ օրացոյցները, թէ հայ և թէ ռուս ընթերցող հասարակութեան կողմից ընդհանրապէս միշտ համակրութիւն են վայելել և առանձին բարեհաճ ընդունելութիւն գտել։

Յուսամ՝ եմ, որ այս անգամ ևս նոյն համակրութիւնը և ընդունելութիւնը գտնելով մեծ քանակութեամբ կը տարածուեն։

Իսկ եղանակի գուշակութեան վրայ առանձին ուշադրութիւն դարձնելով, բացի ընդհանուր ցիկլոններից (երկրագնդիս վրայ որոշ ուղղութեամբ փչող հողմեր), ինչպէս մթնոլորտի յեղաշրջման, այնպէս և ովկիանոսի տեղի ունեցող յայտնի դէպքերն ու երևոյթներն աչքի առաջ ունենալով և ուսումնասիրելով, 1872 թուականից սկսած պահում ենք առանձին վիճակագրութիւն (ստատիստիկա) և ամեն լուսնի երևոյթներին այդ տեղեկութիւններն ու դէպքերը համեմատելով և թէ հռչակաւոր աստղագէտ Հերշելի կանոնին հետևելով, մասամբ հասել ենք մեր նպատակին, մանաւանդ Կովկասի վերաբերութեամբ տարիներ առաջ այդ երևոյթները գուշակելով, ինչպէս մեր ընթերցողներից շատերը, որոնք հետաքրքրուել են, կը վկայեն, որ մեր օրացոյցների գուշակութիւններից հարիւրից 81—82 % ճիշտ որ ժամանակին խսկութեամբ կատարվում են։

Նպատակայարմար և անհրաժեշտ գտնելով նաև այսուհետև եղանակի գուշակութիւնները աւելի ևս ճիշտ և որոշ դարձնելու, այսու դիմում ենք և խնդրում յարգելի ընթերցողներից, որ մեզ, մեր երկարամեայ այդ ուսումնասիրութեանը աջակցէք և ինչպէս յայտնի երևոյթների դէպքերում եղանակի փոփոխութեան մասին մանաւանդ լուսնի երևոյթներին, տեղեկացնելով, այնպէս և մեր վերոյիշեալ աշխատասիրած ու հրատարակուած օրացոյցներում նկատուած թերութիւնները և անճշտութիւնները :ժամանակին յայտնել, որպէս զի այդ տեղեկութեանց հիման վրայ միջոցներ ձեռք առնենք, յիշեալները հեռացնելու և սխալներն ու թերութիւնները ուղղելով, աշխատենք օրացոյցների մէջ զետեղած առանձին մասերն ու բաժանմունքները հարստացնելով, տարէցտարի հրատարակել, որքան կարելի է աւելի ճիշտ և լրացրած տեղեկութիւններով։

Աշխատասիրող

Մեր հասցէն՝ Թիֆլիզ, Մակար Չմշկեան.
Макару Чимишкяну, II уч. Габаевск.
№ 5.



ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆ Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

# ՎԵՀԱՓԱՌ

## Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

*«Զ՚րանին վառ և բոլորք պահելով զկայծակն անմահանամ»*
*Նախն. պատմագիր։*

Մտնելով «Տարեցոյցի» հրատարակութեան քսաներկուերորդ տարեշրջանը, մեր ընթերցողներին, ուրախութեամբ շընորհաւորում ենք Տ. Տ. Մատթէոս Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական գահ բազմելը

Թէև մենք բաղդ չենք ունեցել մօտից ծանօթ լինելու և համբուրելու Նորին Վեհափառութեան Ս. Աջը, սակայն քանիցս ստացել ենք Նորին Վեհափառութեան ս. օրհնութեան ինքնաձեռագիրը։ Եւ 1895—6 թուականների հայկական աղէտալի կոտորածներին իւր եռանդուն գործունէութեան և եւրոպական տէրութեանց դիմումների ու բանակցութեանց ընթացքում, ժողովրդի կողմից «Երկաթէ պատրիարք» կոչումին արժանանալու առթիւ, շտապեցինք մեր բուռն համակրութիւնը արտայայտել և զետեղել մեր աշխատասիրած 1896 թ. «Տարեցոյցի» ճակատին Նորին Վեհափառութեան պատկերը։ Եւ երբ 1907 թ. նոյմ. 29-ին ՚ի Տէր հանգեաւ Մկրտիչ Ա. կաթողիկոսը, այդ ժամանակ ես ի նկատի ունենալով մեր սակաւաթիւ աչքի ընկնող եպիսկոպոսներին, կաթողիկոսութեան համար առաջին հաւանական թեկնածուներ համարեցինք Մատթէոս Իզմիրլեան և Մաղաքիա Օրմանեան բարձր-սրբազաններին, որոնց պատկերները նոյնպէս 1908 թ. մեր աշխ. «Տարեցոյցի», „Ծոցի օրացոյցի“ և ռուսերէն լեզուով հրատարակվող «Армянскiй Календарь съ предсказанiями“ հրատարակութիւններում մէջ զետեղելով՝ ձգտում էինք մեր կողմից ևս նպաստելու այդ նպատակին հասարակաց կարծիքը նախապատրաստելու։ Եւ թէև այժմս ուրախ ենք, որ մեր գուշակութիւնը կատարուած է, սակայն աչքի առաջ ունենալով մեր թշուառ ազգի պատմական անցեալն, այժմեան քաղաքական հանգամանքները, քրիստոնեայ ազգերի մէջ մեր ունեցած կրօնական առանձնայատուկ դիրքը ներկայ ժամանակս, պիտի ասենք որ հայութիւնը բաւականին աննպաստ պայմաններումն է գտնըւում։ Կրկնում ենք, որ վերոյիշեալ հանգամանքներն, մենք հայերս աչքաթող չըպէտք անենք, ամեն կողմից ձգտենք մեր դրութիւնը բարելաւել և լրջամտութեամբ վերաբերուելով մեր անվերջ կոտորածներին՝ աշխատենք ու մտածենք միայն մի ճար, մի վերջնական դեղ-դարման։

Ուստի ցանկալի էր, որ օր առաջ վերջ տրուէր մեր մէջեղած տարաձայնութիւններին և զանազան խմբերի բաժանուած ու կազմուած կուսակցութիւնները, իրանց անվերջ ու անհետևանք ծրագրներով,

'ի մի սիրտ և 'ի մի հոգի ձուլուած իրանց սիրեցեալ Հայրապետի հետ՝ գործէին սիրով և համերաշխութեամբ 'ի փառս ազգի և եկեղեցւոյ։

Իսկ բազմաչարչար հայ եկեղեցւոյ գլխին կանգնելով մի այնպիսի մեծ հեղինակութիւն և ժողովրդականութիւն վայելող ամբիծ հովիւ, որպիսին է Նորին Վեհափառութեան անձնաւորութիւնը, հայ հոգևորականութիւնը ևս, նամանաւանդ Ս. Էջմիածնայ միաբանութիւնը, ժամանակի հոգին և բալէն ըմբռնելով պիտի աշխատի աջակցել ամեն կողմից ծերունազարդ Հայրապետին, որպէս զի ժամանակիս թեթևամիտ և ինքնակոչ վերանորոգիչները ժողովրդի մաքերը չը պղտորեն անմիտ և աննպատակ ծրագրներով և զարերից 'ի վեր հազարաւոր արհաւիրքներից զերծ մնացած Ս. Լուսաւորչայ գահը, պահպանուի ու յարատևի իւր հնաւանդ և քրիստոնէավայել նուիրականութեամբ։

Ուրեմն մաղթենք միաբան որ երկին քը ոյժ և կարողութիւն տայ մեր սիրեցեալ Հովուապետին իւր սրտի իղձերն ու խորհուրդները, ինչպէս և նրա վրա ունեցած մեր յոյսերն, 'ի կատար ածելու։

Տանք մեր որդիական ջերմ համբոյրները նրա Ս. Աջին, սպասենք և յուսանք, որպէս զի նա ըստ աւետարանին «փչէց խաղաղ և պատանէց Նոյ ծաղէ», իւր ցրուած հօտին սէր, հաշտութիւն, միութիւն ներշնչէ, ինչպէս ժամանակին իր նախորդ նշանաւոր հայրապետները՝ որոնք գործել են և անմահացրել իրանց յիշատակը «Ջ'րանին վառ և բորբոք պահելով զկայծակըն անմահանամ» և. գաղափարը, մինչ իրանց գործունէութեան նշանաբանը, կեանքի խորհուրդն ու վերջնական կէտ նպատակն համարելով։

Մակ. Զմչ.

Մայիս 20 1909 թ. Թիֆլ.



† 1909 Թ. ԹԻՖԼԻՍԻ ՆԱԽԿԻՆ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ
ԱՂԷՔՍԱՆԴՐ ՍՏԵՓԱՆԵԱՆ ՄԱՏԻՆԵԱՆ

# ԿՐՕՆԱԿԱՆ

**Ա) 1910 Թ. ՀԱՅՈՑ ՏՕՄԱՐԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ**

Գիր տարւոյն է . . . . . . Ռ.
Վերադիրը . . . . . . . . 30.
Եօթնեկերակը . . . . . . Ե.
Իննեւտասներեակը . . . . 9.
Տանուտէրն . . . . Այծեղջիւրն.

**Բ) ՏԱՐԵՄՈՒՏՆԵՐ**

Հայոց՝ ըստ բուն Տոմարի Օգոստ. 11-ին
» ըստ Ազարիայի Մարտի 21 »
Լատինաց՝ (ըստ Նոր Տոմ.) Դեկ. 19 »
Ռուսաց՝ Յունուարի 1 »
Մահմեդականաց՝ Յունիսի 10 »
Հրէից՝ Սեպտեմբերի 7 »
Հաբեշաց՝ Օգոստոսի 26 »
Ղպտաց Օգոստոսի 1 »
Նեստորականների Հոկտեմբերի 1 »
Չինաց՝ Փետրվարին(լուսն, առաջին օրը) երբ արևը դեռ Ջրհոս համաստեղութեան մէջ է գտնվում:

**Գ) ՀԱՅՈՑ ՇԱՐԺԱԿԱՆ ԵՒ ԱՆՇԱՐԺ ՑԱՅՏՆԻ ՏՕՆԵՐԸ ԵՒ ՄԻՋՕՑՆԵՐԸ**

Սր Կաղ. Ուրբաթ Յունուարի 1-ին
» ԾՆՆԴԵԱՆ Չորեքշ. . . . . 6 »
Միջոց ուտիք 33 օր:
Առաջաւորաց Բարեկ. Փետր. 7 »
Ս. ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ Կիր. Փետ. 14 »
Բուն-Բարեկենդան » 28 »
Ս. ԱՒԵՏՄԱՆ Գշ. Ապրիլի 7 »
ԶԱՏԻԿ . . . . . Ապրիլի 18 »
Երևման Ս. Խաչի Մայիսի 16 »
ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ » 27 »
ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ Յունիսի 6 »
Բարեկ. Ս. Լուս. պհց. Յունիսի 27 »
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Յուլ. 3 »
Բարեկ. Վարդ. պհց. » 18 »
ՎԱՐԴԱՎԱՌ . . » 25 »
Միջոց ուտիք Երկու շաբաթ
Բարեկ Ս. Աստուած. պհց. Օգ. 8 »
ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ Ս. Աստ. » 15 »
Միջոց ուտիք երեք շաբաթ
Բարեկ. Ս. Խաչի Սեպտեմբերի 5 »
ԽԱՉՎԵՐԱՑ. » 12 »
Բարեկ. Վարագայ Ս. Խաչի » 19 »
Վարագայ Ս. Խաչ. » 26 »
Միջոց ուտիք 8 շաբաթ
Գիւտ Խաչ. . . Հոկտեմբ. 24 »
Յիսնակաց Բարեկ. Նոյեմբ. 21 »
Ս Յակովբայ Բարեկ. Դեկտ. 12 »
Միջոց ուտիք 12 օր:
Բարեկ. Ծննդ. պահոց Երեքշաբթի Դեկտեմբերի . . . . . . . 28 »



**Դ) Այն օրերը, երբ Հայաստանեայց եկեղեցւոյ օրէնքով պասքի խորհուրդ կատարելն արգելվում է:**

Ամբողջ մեծի պահոց և Յինանց օրերի ընթացքում. մինչև Նղիական—տաղջին Կիւրակէն Յարութեան:
Այն Կիւրակէ երեկոներին, երբ միւս օրը սրբոց տօն չէ:
Ամեն Շաբաթ երեկոներին:
Ամեն լուս—Չորեքշաբթի և լուս Ուրբաթ երեկոներին:
Շաբաթական պահոց ընթացքում:
Տէրունական մեծ տօների նախընթաց երեկոներին:
Նաւակատեաց Ուրբաթ երեկոներին:
Ծննդեան ութօրէից, Վարդավառի 3 օրերը. Վերափոխման 10-րդ օրը և Ս. Խաչի ամբողջ շաբաթը:

—

**Ե) ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՐՁԱԿՄՈՒՆՔ**

**Տօնք եկեղեցականք**

5. 6. 7. և 13. Յունուարի տօնք Ծննդեան և Անուանակոչութեան Քրիստոսի:
Փետր. 13. Օր Ծննդ. Վեհափառ Մատթէոս Բ. Կաթողիկոսի:
14. Տեառնընդառաջ:
—Ս. Վարդանանց զօրավարացն:
—Մուտն 'ի Վիրապն Ս. Գրիգորի Լուսաւորչին:
Ապրիլ 7 Տօն Աւետման:
—Ելն ի Վիրապէն Ս. Գրիգորի Լուսաւորչին:
—Գիւտ Նշխարաց Ս. Գրիգորի Լուսաւորչին:
—Ս. Թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրոպայ:
—Ս. առաքելոյն Թադէոսի և Ս. Սանդխտոյ կուսին:
Սեպտ. 8—Տօն Ծննդ. Ս. Աստուած.
—Յարեդարձ Ս. Օծման Վեհափառ Մատթէոս Բ. ամենայն հայոց կաթողիկոսի:
Հոկտ. 16. Անուանակոչութիւն Վեհափառ Հայրապետի:
Նոյ. 21.—Ընծայումն Ս. Աստուածածն.
—Ս. Առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի:
Դեկտ. 9. Տօն Յղութեան Ս. Աստուածածնի:

—

**Զ) ՏՕՆՔ ԿԱՅՍԵՐԱԿԱՆՔ**

Ապրիլի 23.—Անուանակոչութիւն Ն. Կ. Մ. Կայրուհւոյ Ալէքսանդրայ Ֆէօդորովնայի:
Մայիսի 6.—Ծնունդ Ն. Կ. Մ. Կայսր Նիկոլայ Ալէքսանդրովիչի:
Մայիսի 14.—Թագադրութիւն Ն. Կ. Մ. Կայսր Նիկոլայ Ալէքսանդրովիչի և Ալէքսանդրայ Ֆէօդորովնայի:
« 25 Ծն. Ն Կ. Մ. Թագուհի-Կայսրուհւոյ Ալէքսանդրայ Ֆէօդորովնայի:
Յուլ. 22.—Անուանան. Ն. Կ. Մ. Մայր Թ. Կայսրուհւոյ Մարիայ Ֆէօդորովնայի:
Յուլ. 30.—Ծնունդ Ն. Կ. Մ. Թագաժառանգ Կայսր Ալէքսէի Նիկոլայեւիչի:
Օգոստ. 25.—Յիշատակ նուաճման արևելեան Կովկասու:
Հոկտ. 5.—Անուանակ. Ն. Կ. Մ. Թագաժառանգ Կայսր Ալէքսէի Նիկոլայևիչի:
Հոկտ. 21.—Գահակալութիւն Ն. Կ. Մ.—Կայսր Նիկոլայ Ալէքսանդրովիչի:
Նոյեմբերի 14.—Ծ. Ն Կ. Մ. Մայր Թ. Կայսրուհւոյ Մարիայ Ֆէօդորովնայի:
Դեկտ. 6.—Անուանակոչութիւն Ն. Կ. Մ. Կայսր Նիկոլայ Ալէքսանդրովիչի:

# ՅՈՒՆՈՒԱՐ

Երկիրը բացի իր առանցքի վերայ պտտուելուց պտտում է նաև արևի շուրջը—365 օրում 5 ժ. 48 ր. 51 վայրկեանում։ Եւ այդ ժամանակամիջոցը անուանել են տարի։ Հին ժամանակները այդ շրջանը անուանում էին Կենդանակերպեան կամ Զօդիակոսեան շրջան։ Երկիրը պտտուելով արևի շուրջը՝ անցնում է 12 համաստեղութիւններ, որոնց անուանել են Կենդանակերպներ. իսկ իւրաքանչիւր համաստեղութիւնը ամիս։ Ջրհոս կենդանակերպ համաստեղութեանը — համապատասխանող Յունուար ամսին, անուանել են Հռովմայեցոց չաստուած Յանոսի անունով, որովհետև Հռոմոլոսի ժառանգ Նումմա Պոմպելիոսը, կարգաւորելով և լրացնելով Հռոմոլոսի տարուայ ամիսների թիւը, ի պատիւ Յանոսի 12 բագիններով տաճար հիմնեց և տարուայ առաջին ամիսը ի պատիւ նորա անուանեց Յանուար։ Մեր նախնիքն էլ, ինչպէս ուրիշ ազգեր, նայելով բնութեան երևոյթներին, երկրի սովորութեան, աւանդութեան, նաև մարդկանց զբաղմունքների և պատահած ժամանակին, ամիսներին յարմար անուններ էին տալիս. օրօրինակ՝ տարեգլուխը, ի յիշատակ ջրհեղեղի սկսել են Օգոստոս ամսից, ջրհեղեղի վերջանալու և նոյեան նաւի—տապանի կանգնած տեղին հասնելու պատճառաւ անուանել են Նաւասարդ, որ է նաւ-աստ-արդ, (նաւը-արդէն-այստեղ է կամ նաւը հասել է արդէն)։ Յունուարին անուանել են Արաց։

Այստեղ աւելորդ չենք համարում յիշել որ մինչև 1567 թ. տար Մարտ ամսից էին սկսում, որովհետև Յունուար ամիսը տարուայ 11-րդ ամիսն էր հաշւում. իսկ 1567 թ. ֆրանսիական Կարլոս X-ի հրովարտակով, նոր տարին—ամանորը Յունուարի մէկից սկսեցին գործածել, որը մինչև այժմ շարունակվում է ամբողջ Եւրոպայում։

Ծ. Ս.

## ԱՍՏՂԱԳԷՏՆԵՐԻ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ

ՅՈՒՆՈՒԱՐ.—Ջրհոսն։ Այս համաստեղութեան տակ ծնուած տղան համեստ է, բարի, սիրելի, խելացի, ուրախ, հետաքրքիր, կասկածոտ և հանճարեղ՝ որից և օգտուող։ Միակ պակասութիւնը՝ անչափ փառամոլութիւնն է։ Սկզբումը չունևոր, վերջը կարողութեան տէր, միայն այդ ամենն ևս վատնող։ Երեխաներ նաև քիչ ունեցող։

Իսկ այս համաստեղութեան տակ ծնուած աղջիկը հաստատակամ է, վեհանձն, անկեղծ, շռայլ, ուրախ և աւելի իր բաւականութիւնների ետևից ընկնող։ Իւր զուարթ բնաւորութեան շնորհիւ հեշտութեամբ կըտանէ զանազան վշտեր և անյաջողութիւններ, որոնց սպասելու է հէնց ամուսնութեան սկզբից։ Շատ տեղ կըճանապարհորդի և ջահիլ ժամանակ իր քաշած նեղութիւններից մեծ հարստութիւն ձեռք կըբերի, բայց ծերութեան ժամանակ զգուշանալու է, որ անդամալոյծ չդառնայ։

Առհասարակ յունուարին ծընուածները հոկտեմբեր ամսուայ կէսից մինչև նոյեմբերի կէսը հիւանդանալուց զգուշանալու են։ Իսկ իրենց գործերի ամենայաջող ժամանակը դեկտեմբերի 15-ից մինչև յունուարի 15-ն է։

—

# ՅՈՒՆՈՒԱՐ

31 ՕՐ

| Օ | | Ն |
|---|---|---|
| 1 | Ուր. տյ. 3 օր Ծննդեան պահոց։ Տարեմուտ և կաղանդ։ Ռուսաց. Տօն Անուանակոչութեան Տեառն և Ս. Բարսեղի հայրապետին։ | 3 |
| 2 | Շբ. տյ. 4. օր Ծննդ. պահոց։ Ս. Բարսեղի հայրապետին և եղբօր նորին Գրիգորի Նիւսացւոյն, Սեղբեստրոսի Հռոմայ հայրապետին և Աբբայ Եփրեմի Խորին Ասորւոյ։ | 4 |
| 3 | ✝ Կիր. ոյ. 5. օր Ծննդեան պահ-ց Է. Կիր. զկնի Յինանկի | 5 |
| 4 | Բշ. ոյ 6 օր Ծննդեան պահոց։ | 6 |
| 5 | Գշ. բյ. Ճրագալոյց Ծննդեան։ Նաւակատիք։ Երեկոյ. զկնի պատարագի նախատօնակ (մինչև ամսոյս 14-ն ամեն երեկ. նախատօնակ կատարի)։ Ռ. Ճրագալոյց Աստուածայայտնութեան։ | 7 |
| | Առ. քռ. լս. Ձիւնոտ եղ. | |
| 6 | ✝ Դշ. բյ. ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. Զբօրհնէք։ Ուտիք է մեզ անմիջոցութ օր։ Ռուսաց և Յունաց՝ Մկրտութիւն Տեառն։ | 8 |
| 7 | ✝ Եշ. ֆյ 2. օր Ծննդեան։ Յիշատակ մեռելոց։ Ռուսաց՝ Ս. Յովհաննու Կարապետին։ | 9 |
| 8 | Ուր ֆյ. 3 օր Ծննդեան։ ☉ Արեգակն ՚ի Ջրհոսն 8 ժ. 56 ր. առ. | 10 |
| 9 | Շբ տյ. 4. օր Ծննդեան։ | 11 |
| 10 | ✝ Կիր տյ. 5. օր Ծննդեան։ | 12 |
| 11 | Բշ. ոյ. 6. օր Ծննդեան։ | 13 |
| 12 | Գշ. ոյ 7. օր Ծննդեան | 14 |
| | ● Լր. լս. Հողմոտ եղ. | |
| 13 | ✝ Դշ. բյ. 8 օր. Ծննդեան։ ՏՕՆ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ։ | 15 |
| 14 | Եշ. բյ. Տօն ծննդեան Ս. Յովհաննու Կարապետին։ | 16 |
| 15 | Ուր. ֆյ. Պահք։ | 17 |

| Օ | | Ն |
|---|---|---|
| 16 | Շբ. ֆյ. Ս. Պետրոսի հայրապետին, Վլասայ եպիս. և Աբխոզամայ սարկաւագին։ | 18 |
| 17 | ✝ Կիր տյ. Ա. Կիր. զկնի Ծննդեան։ Հարանիք։ | 19 |
| 18 | Բշ. տյ. Ս. Անտոնի Ճգնաւորին։ | 20 |
| 19 | Գշ. ոյ. Ս. Թէոդոսի Թագաւորին և մկցն Եփեսոսի։ | 21 |
| 20 | Դշ. ոյ. Պահք։ Լատ. Տեառնընդառաջ։ | 22 |
| | ◐ Վր. քռ. լս. Ձնաբեր հողմոտ։ | |
| 21 | Եշ. բյ. Ս. Կիրակոսի և մօրն նորա Յուղիտայի և Ս վկայիցն Գորդիոսի, Պօղիքտոսի և Գրիգորիսի։ | 23 |
| 22 | Ուր. բյ. Պահք։ | 24 |
| 23 | Շբ ֆյ. Ս. Հայրապետացն Աթանասի և Կիւրղի։ | 25 |
| 24 | ✝ Կիր. ֆյ. Բ. Կիր. զկնի Ծննդեան։ Հարանիք։ | 26 |
| 25 | Բշ. տյ. Ս. Վահանայ Գողթնացւոյն, Եգնեայ կուսին և Հօրն նորա Փիլիպպոսի և մօրն Կղոդեայ և երկ եղբարցն Աերգեայ և Ապիտոնի և երկուց ներքինեացն։ | 27 |
| 26 | Գշ. տյ. Ս. Տրիփոնի, Պարսամայ և Ոնոփրիոսի ճգնաւորացն։ | 28 |
| 27 | Դշ. ոյ. Պահք։ | 29 |
| 28 | Եշ. ոյ. Ս. վկայիցն Եւգենիոսի, Մակարիոսի, Վալերիոսի, Կանդիդոսի և Ակիղասայ։ | 1 |
| | ◑ Նն. լս. Փոփոխական եղանակ։ | |
| 29 | Ուր. բյ. Պահք։ | 2 |
| 30 | Շբ. բյ. Ս. Գրիգորի Աստուածաբանին։ | 3 |
| 31 | ✝ Կիր. ֆյ. Գ. Կիր. զկնի Ծննդեան։ Հարանիք։ | 4 |

Այս ամսուայ 1 ից մինչև 31-ը օրը աւելացել է 1 ժ. 52 րոպէ։

# ՓԵՏՐՈՒԱՐ

Օրացոյցը կամ ժամանակի հաշիւը սկսուեցաւ հին ժամանակները յոյներից և հռովմայեցիներից, այդ պատճառով նոր ազգերն էլ մինչև այսօր հին ազգերի գործածած անունները են գործ դնում։ Այս ամիսն էլ, Հռոմուլոսի ժառանգ Նումեա Պոմպէլիոսը կարգադրեց տարեշրջանի երկրորդ ամիս համարել։ Որովհետև այս ամիսը ընդհանրապէս անձրևոտ էր լինում, ի հնումն նուիրու ծ էր ի պատիւ ծովի չաստուած Պօսիդոնին, իսկ Ֆեպրէ, իտալերէն նշանակում է «տենդ» և անձրևներից առաջացած Հռովմի շրջակայքում այս ամսում տեղի ունեցած տենդի համաճարակի պատճառով փետրուարին անուանում լին տենդի ամիս։ Փետրվար ամիսը համապատասխանում է—Զուկ համաստեղութեանը և վերցրած է Ֆեբրուալի բառից։ Այսպէս անուանում էին հռովմայեցիք զոհաբերութեանը՝ որ սովորաբար այս ամսին լին կատարում։ Մեր նախնիքն էլ երևի հենց այս պատճառաւ անուանել են այս ամսին Մեհեկի (երևի Մեհենաց ամիս)։

## ԱՍՏՂԱԳԷՏՆԵՐԻ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ

ՓԵՏՐՈՒԱՐ.—Զուկն։ Այս համաստեղութեան տակ ծնուած տղան խաղամոլ է, համարձակ, գիտուն, ճնապարծ ու զուարթ։ Զահել ժամանակ չունենար, սակայն հարստանալուց յետոյ շռայլող, վատնող։ Թէև լաւ շրջանների սիրահար, բայց մինչև 40 տարեկան հասակը կանանցից քամրաղղ։ Եւ իւր անընդունակութեան շնորհիւ վնասներ կրելով ինքն է միայն տուժում։

Իսկ այս համաստեղութեան տակ ծնուած աղջիկը հաղուագիւտ գեղեցկուհի է լինում, յաճախ սրտով բարի, խելօք, ընդունակութեանց տէր ու գրական կարծիքներ ունեցող։ Երեխաներ էլ քիչ է ունենում։ Առհասարակ փետրուար ամսում ծնուածները արի են լինում և ծառայութեան մէջ բաղդաւոր, բայց չարամիտ մարդկանցից զգուշանալու են։

# ՓԵՏՐՈՒԱՐ

## 28 ՕՐ

| Օ | | Լ |
|---|---|---|
| 1 | Բշ. ֆյ. Ս. Մակարայեցւոցն, Եղիազարու քահանային, Շամունեայ և եօթն որդւոց նորին։ | 5 |
| 2 | Գշ. գյ. Ս. երկոտասանից մարգարէիցն, Ովսեայ, Ամովսայ, Միքեայ, Յովելեայ, Աբդիու, Նաւումայ, Ամբակումայ, Յօնանու, Սոփոնիայ, Անգեայ, Զաքարիայ և Մաղաքիայ։ Ռ. Տեառընդառաջ։ | 6 |
| 3 | Դշ. փյ. Պահք։ | 7 |
| | Առ. քռ. Հավօխօտ եղ. | |
| 4 | Եշ. տյ. Ս. Սոփիա և երից դստերացն, Պիստոսի, Ելպիսի և Ագապի։ | 8 |
| 5 | Ուր տյ. Պահք։ | 9 |
| 6 | Շշ. բյ. Ս որդւոց և թոռանց Ս. Գրիգորի Լուսաւորչին մերոյ, Արիստակէսի, Վրթանէսի, Յուսկանն, Գրիգորիսի և Դանիէլի։ | 10 |
| | Արեգ. 'ի Զուկն 10 ժ. 51 ր. | |
| 7 | ✠ Կիր. բյ Դ. Կիր. զկնի Ծննդեան։ Բարեկենդան Առաջաւորաց պահոց։ | 11 |
| | Օր իջանելոյ ջերմութեան արեւ յօդս։ | |
| 8 | Բշ. ֆյ. 1. օր Առաջաւ. պահոց։ | 12 |
| 9 | Գշ. ֆյ. 2. օր Առաջաւ. պահոց։ | 13 |
| 10 | Դշ. գյ. 3. օր Առաջաւ. պահոց։ | 14 |
| 11 | Եշ. փյ. 4. օր Առաջաւ. պահոց։ | 15 |
| | Լր. լս Փօխօրխօլէծ եղ.։ | |
| 12 | Ուր. տյ. 5 օր Առաջաւ. պահոց։ Յիշատակ Յօնաննու մարգարէին։ | 16 |
| 13 | Շբ. տյ. Ս. Սարգսի զօրավարին և որդւոյ նորա Մարտիրոսի և չորեքտասան զինուորացն։ Հանդիսաւոր օր ուխտի Տփխիսայ Ս. Սարգիս եկեղեցւոյ։ Յերեկ. Նախ. | 17 |
| | Լր. լս. Խօռնօյ եղ. | |
| 14 | ✠ Կիր. բյ. Ե. կիր. զկնի Ծննդեան։ ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ։ | 18 |

| Օ | | Լ |
|---|---|---|
| | Օր իջանելոյ ջերմութեան արեւու 'ի ջուրս։ | |
| 15 | Բշ. բյ. Ս. Ատովմեանց զօրավարացն։ | 19 |
| 16 | Գշ ֆյ. Ս. Սուքիասեանց վկայիցն։ | 20 |
| 17 | Դշ. ֆյ. Պահք։ | 21 |
| 18 | Եշ. գյ Ս. Ոսկեանց քահանայիցն։ | 22 |
| 19 | Ուր. փյ. Պահք։ | 23 |
| | Վր քռ. լս. Դօռնօյօնչ եղ. | |
| 20 | Շբ. տյ. Ս ՍԱՀԱԿԱՅ ՊԱՐԹԵՒԻ հայրապետին մերոյ։ | 24 |
| 21 | ✠ Կիր. տյ. Զ. Կիր. զկնի Ծննդ. | |
| | Օր. իջանելոյ ջերմութեան արեւու ի հողն։ | 25 |
| 22 | Բշ. բյ. Ս. Մարկոսի, եպիսկոպոսին, Պիոնի քհն., Կիւրղի և Բենիամինի սարկաւագացն և Ս. վկայիցն Աբդլմսէի, Որմզդանայ և Սայենի։ Յերեկ. Նախատօնակ։ | 26 |
| 23 | Գշ. բյ. Ս. ՂԵՒՈՆԴԵԱՆՑ քահ. | 27 |
| 24 | Դշ. ֆյ. Պահք։ Յերեկ. Նախատօն. | 28 |
| 25 | ✠ Եշ. ֆյ. Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ զօրավարացն մերոց և 1036 վկայիցն, որք անկան 'ի մեծ պատերազմին Աւարայրի։ Տօն ազգային և Յիշատակ մեռելոց։ | 29 |
| 26 | Ուր. գյ. Պահք։ Ռ. Բարեկ. եօթն։ | 1 |
| | Ծն. լս. Սօռնօմօնէօ։ | |
| 27 | Շբ. փյ. Կ. Պօլսոյ Ս. Ժողովոյ՝ 150 հայրապետացն։ Զկնի երեկոյեան ժամասացութեան ծանկեսցի սեղանն վարագուրաւ, Ռ. Բարեկ. եօթնեկի։ | 2 |
| 28 | ✠ Կիր. տյ. Բուն-Բարեկենդան։ Եւս Յ. և Ուսասցի։ | 3 |

—

Այս ամսուայ 1-ից մինչև 28 ը օրն աւելացել է 7 ժ. 2 րոպէ։



# ՄԱՐՏ

Հռովմայեցոց մէջ Մարտ էր Հռոմուլոսի տարուայ առաջին ամիսը, որ իր անունը ստացել է պատերազմի չաստուած Արամազդի և Հերայի զաւակ Մարսից (Արէս), որը (աւանդութեամբ Հռովմի հիմնադրի) Հռոմուլոսի հայրն էր համարւում. Այսպէս անուանեց Հռոմուլոսը, տարին բաժանելով ամիսների։ Որովհետև Իտալիայում այս ամսումն է սկսւում գարունը, սորա համար հին ժամանակները գարունը ընդունելու համար տօն էին կատարում։ Այդ Հանդէսը պսակի և ամուսնութեան տօն էր։ Ամուսնացած կանայք ծաղիկներ էին զոհաբերում հպատակութեան չաստուած Յունոնայի ուխտատեղւոյն, իսկ աղամարդիկ իրենց կողմից զոհաբերում էին երկգլխեան չաստուած Յանոսին։ Այս տօնը կանանց յաղթութեան հանդէս էր, լի ուրախութեամբ և ցնծութեամբ։ Որովհետև հին ժամանակները շատ ազգերի տարին սկսւում էր այս ամսից, որ համարւում էր արևային տարեշրջանի սկիզբն, երևի հենց այս պատճառաւ մեր նախնիքն էլ այս ամսին անուանել են Արեգ։

## ԱՍՏՂԱԳԷՏՆԵՐԻ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ

ՄԱՐՏ. Խոյն։ Այս համաստեղութեան տակ ծնուած տղան եռանդոտ, արդարադատ, քաղցրախօս, հետաքրքիր և կրքոտ բնաւորութեան տէր է լինում. ոչ տուած խօսքն է պահում և ոչ խոստումն կատարում։

Իսկ այս համաստեղութեան տակ ծնուած աղջիկը գեղեցիկ է, արդարասէր, քաղցրեղէն սիրող, շատակեր և իւր նկատած բաների մասին երկար ու բարակ դատողութիւններ տուող, այդ պատճառով էլ՝ շատախօս, անխնայ զրպարտող ու շուտ զայրացող է լինում։

Այս ամսին ծնուածներն առհասարակ առևտրի մէջ յաջողութիւն են ունենում, թէև ժլատ են լինում, միայն հոկտեմբեր ամսից զգուշանալու են։

---

# ՄԱՐՏ

## 31 ՕՐ

| Օ | | Լ |
|---|---|---|
| 1 | Բշ. տյ. 1. օր մեծի պահոց։ | 4 |
| 2 | Գշ. տլ. 2. օր մեծի պահոց։ | 5 |
| 3 | Դշ. բյ. 3. օր մեծի պահոց։ | 6 |
| 4 | Եշ. բլ. 4. օր մեծի պահոց։ | 7 |
| 5 | Ուր. փյ. 5. օր մեծի պահոց։ | 8 |
| | ☾ Առ. քռ. լս. Տեղտեղ ժ[illegible] | |
| 6 | Շբ. փլ. 6 օր մեծի պահոց։ Ս. Թէոդորոսի զօրավարին։ Եւս Ռուսաց։ | 9 |
| 7 | ✠ Կիր. ցյ. 7. օր. մեծի պահոց։ Բ. Կիր. Քառասնորդ. պահոց։ | 10 |
| 8 | Բշ. ցլ. 8. օր մեծի պահոց։ | 11 |
| | ♈ Արեգակն 'ի Խոյն։ 3 ժ. 02 րոպ. ցեր. Գարնանամուտ և հաւասարակած—Տիւ և գիշեր հաւասար։ | |
| 9 | Գշ. տյ. 9. օր մեծի պահոց։ | 12 |
| 10 | Դշ. տլ. 10 օր մեծի պահոց։ | 13 |
| 11 | Եշ. բյ. 11. օր մեծի պահոց։ | 14 |
| 12 | Ուր. բլ. 12. օր մեծի պահոց։ Լատ. Աւետումն։ | 15 |
| | ☽ Լր. լս. Դառնալուանդ եղ. | |
| 13 | Շբ. փյ. 13. օր մեծի պահոց։ Ս. Կիւրղի Երուսաղէմայ հայրապետին և միւս Կիւրղի եպիսկոպոսի և մօրն նորա Աննայի։ | 16 |
| 14 | ✠ Կիր. փլ. 14. օր մեծի պահոց։ Գ. Կիր. Քառասնորդական պահոց.—(Անառակին)։ | 17 |
| 15 | Բշ. ցյ. 15. օր մեծի պահոց։ | 18 |
| 16 | Գշ. ցլ. 16. օր մեծի պահոց։ | 19 |
| 17 | Դշ. տյ. 17. օր մեծի պահոց։ | 20 |

| Օ | | Լ |
|---|---|---|
| 18 | Եշ. տլ. 18. օր մեծի պահոց։ | 21 |
| 19 | Ուր. բյ. 19. օր մեծի պահոց։ | 22 |
| 20 | Շբ. բլ. 20. օր մեծի պահոց։ Ս. Յովհաննու Երուսաղէմայ հայրապետին և Ս. հայրապետայն մերոց Յովհաննու Օձնեցւոյն, Յովհաննու Որոտնեցւոյն և Գրիգորի Տաթևացւոյն։ | 23 |
| 21 | ✠ Կիր. փյ. Դ. Կիր. Քառասնորդական պահոց.-(Տնտեսին)։ | 24 |
| | ☽ Վր քռ. լս. Մ[illegible] եղ. | |
| 22 | Բշ. փլ. 22. օր մեծի պահոց։ | 25 |
| 23 | Գշ. ցյ 23. օր մեծի պահոց։ | 26 |
| 24 | Դշ. ցլ. 24. օր մեծի պահոց։ (Միջինք)։ | 27 |
| 25 | Եշ. տյ. 25. օր մեծի պահոց։ Ռուսաց և Յունաց՝ Աւետումն Ս. Աստուածածնի։ | 28 |
| 26 | Ուր. տլ. 26. օր մեծի պահոց։ | 29 |
| 27 | Շբ. բյ. 27. օր մեծի պահոց։ Ս. Մանկանցն Քառասնից, որք ի՛ Սեբաստիա կատարեցան։ | 30 |
| 28 | ✠ Կիր. բլ. 28. օր մեծի պահոց։ Ե. Կիր. Քառասնորդական պահոց (Դատաւորին)։ | 1 |
| | ⊕ Մնունդն լուս. Անձրևաբեր եղ. | |
| 29 | Բշ. փյ. 29. օր մեծի պահոց։ | 2 |
| 30 | Գշ. փլ. 30. օր մեծի պահոց։ | 3 |
| 31 | Դշ. ցյ. 31. օր մեծի պահոց։ | 4 |

Այս ամսուայ 1-ից մինչև 31-ը օրը աւելացել է 2 ժ. 10 րոպէ։





# ԱՊՐԻԼ

Ապրիլամիսը Հռոմուլոսի տարւոյ երկրորդ ամիսն էր։ Որովհետև այս ամիսը գարնան երկրորդ ամիսն էր և օրերը քանի գնում էին տաքանում էին, բնութեան այս գործողութեան պատճառաւ անուանել են Ապրիլ—Aprilis, որ լատիներէն նշանակում է արևային կամ տաքացնող, իսկ Apevire խօսքը լատիներէն նշանակում է «բանալ», և որովհետև այս ամսում երկրից ծլում և բացվում են ցանքերը, սերմերն ու տունկերը, այդ պատճառով Հռոմում այս ամսուայ մէջ կատարւում էր ի պատիւ պտղաբերութեան չաստուած Ցերերի փառաւոր տօն։ Մեծ հանդիսով տանում էին չաստուածների արձանները երեխայքը նժոյգների վերայ հեծած և ժողովուրդը ցնծութեան և ուրախութեան աղաղակներով, իսկ քրմերը ի պատիւ չաստուծոյ սպիտակ հանդերձներ հագած զոհաբերում էին ամուլ կովեր։ Մեր նախնիք այս ամսին անուանել են Ահեկի։

## ԱՍՏՂԱԳԷՏՆԵՐԻ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ

ԱՊՐԻԼ.—Ցուլն։ Այս համաստեղութեան տակ ծնուած տղան աներկիւղ է, կտրուկ, զայրացկոտ, խստասիրտ և իր թշնամիներին հալածող։ Թէև ունևոր բայց ժլատ. բաղդաւորութեամբ կըփայլի և դրան նպաստող դէպքերը իւր ցանկութիւնները կըկատարեն։ Շատ էլ կըճանապարհորդէ։

Իսկ այս համաստեղութեան տակ ծնուած աղջիկը բնաւորութեամբ ուժեղ, եռանդոտ, աշխոյժով, թէև բնութեամբ անժուժկալ կըլինի. միայն իբրև ամուսին խոնարհ և հաւատարիմ կըլինի, եթէ իր և իր ամուսնու բնաւորութիւններն իրար համապատասխանեն։

Ապրիլ ամսին ծնուածներն առհասարակ ոտքերի ուռոյցքից զգուշանալու են։ Իրենց կեանքը երկու մասի կըբաժանուի. առաջին մասը շատ վտանգալից կանցնի և կըտևի մինչև 33 տարեկան հասակը.

---

# ԱՊՐԻԼ

## 30 ՕՐ

| Օ | | Ն |
|---|---|---|
| 1 | Եշ. տ՛. 32. օր մեծի պահոց։ | 5 |
| 2 | Ուր. ա՛. 33. օր մեծի պահոց։ Ցերեկոյին Նախատօնակ։ | 6 |
| 3 | ✠ Շբ. ա՛. 34. օր մեծի պահոց։ Ս. ԳՐԻԳՈՐԻ Մերոյ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ, տոկալն չարչարանացն և մուտն 'ի Վիրապն։ | 7 |
| | ◐ Առ. քռ. լս. Ցրտաշունչ եղ. | |
| 4 | ✠ Կիր. բ՛. 35. օր մեծի պահոց։ Զ. Կիր. Քառասնորդական պահոց.—(Գալստեան)։ | 8 |
| 5 | Բշ. բ՛. 36. օր մեծի պահոց։ | 9 |
| 6 | Գշ. գ՛. 37. օր մեծի պահոց։ Ցերեկոյեան Նախատօնակ։ | 10 |
| 7 | ✠ Դշ. գ՛. 38. օր մեծի պահոց։ ՏՕՆ ԱՒԵՏՄԱՆ Ս. կուսին ՄԱՐԻԱՄՈՒ. | 11 |
| 8 | Եշ. փ՛. 39. օր մեծի պահոց։ ☼ Արեգ. 'ի Ցուլն մտանէ։ | 12 |
| 9 | Ուր. տ՛. 40. օր մեծի պահոց։ | 13 |
| 10 | Շբ. ա՛. 41. օր մեծի պահոց։ Յիշատակ Ղազարու Յարութեան. | 14 |
| 11 | ✠ Կիր. ա՛. Պահք։ Է. Կիր. ԾԱՂԿԱԶԱՐԴ։ Ցերեկ. Դռնաբացէք։ Յունաց. և Ռուսաց՝ Ծաղկազարդ։ | 15 |
| | ◯ Լր. լուսնի. Բարեխառն եղ. | |
| 12 | ✠ Աւագ-Երկուշաբթի բ՛. Պահք։ | 16 |
| 13 | Աւագ-Երեքշաբթի բ՛. Պահք։ Յիշատակ տասն կուսանաց։ | 17 |
| 14 | Աւագ-Չորեքշաբթի փ՛. Պահք։ | 18 |
| 15 | ✠ Աւագ-Հինգշաբթի փ՛. Պահք։ ՅԻՇԱՏԱԿ ՈՏՆԼՈՒԱՑԻ։ Եւմուս. | 19 |

| Օ | | Ն |
|---|---|---|
| 16 | Աւագ-Ուրբաթ փ՛. Պահք ։Յիշ. Չարչարանաց և Խաչելութեան. Տեառն մերոյ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ | 20 |
| 17 | Աւագ-Շաբաթ գ՛. Ճրագալոյց Ս. Յարութեան։ Նաւակատիք։ Ցերեկոյեան զկնի պատարագի նախատօնակ. | 21 |
| 18 | ✠ Կիր. ա՛. ԶԱՏԻԿ։ (Ս. Յարութիւն Քրիստոսի)։ Ուտիք է մեզ անմիջոց յՀամբարձումն։ Նա Յունաց և Ռուսաց, որոց ուտիք է ցնոր Կիւրակէ։ Լատ. ևս Զատիկ։ | 22 |
| 19 | ✠ Բշ. ա՛. 2. օր Զատկի։ Յիշատակ Մեռելոց։ | 23 |
| | ☾ Վր. քռ. լս. Գարնանա. եղ. | |
| 20 | ✠ Գշ. բ՛. 3. օր Զատկի։ | 24 |
| 21 | Դշ. բ՛. 4. օր Զատկի։ | 25 |
| 22 | Եշ. ՛. 5. օր Զատկի։ | 26 |
| 23 | Ուր. փ՛. 6. օր Զատկի։ | 27 |
| 24 | Շբ. փ՛. 7. օր Զատկի։ Յիշատակ Գլխատման Ս. Յովհաննու Մկրտչի։ | 28 |
| 25 | ✠ Կիր. տ՛. 8. օր Զատկի։ Բ. Կիր։ Նոր Կիւրակէ.—(Կրկնազատիկ)։ | 29 |
| 26 | Բշ. ա՛. 9. օր Յինանց։ | 1 |
| | ● Մնունդն լուս. Զուարթաբեր եղ. | |
| 27 | Գշ. ա՛. 10. օր Յինանց։ | 2 |
| 28 | Դշ. բ՛. 11 օր Յինանց։ | 3 |
| 29 | Եշ. բ՛. 12. օր Յինանց։ | 4 |
| 30 | Ուր. փ՛. 13 օր Յինանց։ | 5 |

—

Այս ամսուայ մէկից մինչև 31-ը օրն աւելացել է 1 ժ. 4 րոպէ։





# ՄԱՅԻՍ

Մայիս ամիսը, ի հնումն նուիրուած էր, ի պատիւ Արամազդ չաստուծոյ համանիշ Մայեա դիցուհուն և ինչպէս կարծում են, լատինացել է իր անունը լատինական majores բառից, որ նշանակում է «նախնիք»։ Որովհետև այս ամիսը գարնան վերջին ամիսն էր, սորա համար ընծայած էր ծերոց և նախնեացը, և այդ պատճառով արգելուած էր այս ամսին ամուսնանալը։ Մայիսը գարնանային ամիս լինելով և ամենուրէք այգի ու պարտէզ, դաշտ ու հանդ, ծաղկով, վարդով փթթած լինելու պատճառով զանազան ազգերի մէջ տօնվում էր գարնանային հանդէսներով, որի մէջ մեծ դեր էին խաղում պատանիք և աղջկունք, ծաղկունք ու կանաչ ճիւղեր։ Մեր նախնիք անուանել են այս ամիսը Մարերի։

## ԱՍՏՂԱԳԷՏՆԵՐԻ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ

ՄԱՅԻՍ.—Եկաւորն։ Այս համաստեղութեան տակ ծնուած տղան ինչպէս արտաքուստ գեղեցիկ է, այնպէս էլ ի ներքուստ հոգով բարի, խելօք, շրջանկատ, մեծահոգի և մասամբ կասկածոտ, ճարպիկ, խորամանկ և ազատ արհեստների սիրահար։ Այդպիսիների սիրտը կարծես սիրոյ և բարեկամութեան համար է ստեղծուած։ Եւ բաղդաւոր են լինում, եթէ իրենց կեանքը կապում են այնպիսի կնոջ կամ բարեկամի հետ, որոնք նոյնպէս սոյն համաստեղութեան տակ են ծնուած։

Իսկ ծնուած աղջիկը լինում է գեղեցիկ, բարի, պարզ և հեզ։ Իրենից տարիքով փոքր մարդու հետ բախտաւորութիւն չի գտնիլ, բացի իւր նման բնաւորութիւն ունեցող պատուական ամուսնուց։

Մայիսին ծնուածներն առհասարակ, մարդ թէ կին, գիտութեանց սիրահար են լինում, գործերի մէջ հմուտ, բնաւորութեամբ գլուխթեք և փափկամարմին։ Իսկ 31 տարեկան հասակում ղգուշ պէտք է լինեն հիւանդանալուց։

# ՄԱՅԻՍ

31 ՕՐ

| Օ | | Ն |
|---|---|---|
| 1 | Շբ. գէ. 14. օր Ցինանց։ | 6 |
| 2 | ✠ Կիր. դֆ. 15 օր Ցինանց։ Աշխարհամատրան Կիւրակէ—(Կանաչ Կիւրակէ)։ | 7 |
| 3 | Բշ. դէ. 16. օր Ցինանց։ | 8 |
| | ☽ Առ. քռ. լս. Գուշնունդեն եգ. | |
| 4 | Գշ. ոֆ. 17. օր Ցինանց։ | 9 |
| 5 | Դշ. ոէ. 18. օր Ցինանց։ | 10 |
| 6 | Եշ. բֆ. 19. օր Ցինանց։ | 11 |
| 7 | Ուր. բէ. 20. օր Ցինանց։ | 12 |
| 8 | Շբ. գֆ. 21. օր Ցինանց։ | 13 |
| 9 | ✠ Կիր. գէ. 22 օր Ցինանց։ Դ. Կիր (Կարմիր-Կիւրակէ)։ Ռուսաց՝ Տօն Փոխադրութեան Նշխարաց Ս. Նիկողայոսի Սքանչելագ. | 14 |
| | ☼ Արեգ. ՚ի Եկաւորն մտանէ։ | |
| 10 | Բշ. դֆ. 23. օր Ցինանց։ | 15 |
| 11 | Գշ. դէ. 24. օր Ցինանց։ | 16 |
| | ● Լր. լուսնի. Տ. գ. ժէ. գ. ժնջբե. | |
| 12 | Դշ. ոֆ. 25. օր Ցինանց։ | 17 |
| 13 | Եշ. ոէ. 26. օր Ցինանց։ | 18 |
| 14 | Ուր. բֆ. 27 օր Ցինանց։ | 19 |
| 15 | Շբ. բէ. 28. օր Ցինանց։ | 20 |
| 16 | ✠ Ե. Կիր. գֆ. 29. օր Ցինանց։ Տօն Երևման Ս. Խաչի։ | 21 |

| Օ | | Ն |
|---|---|---|
| 17 | Բշ. գէ. 30. օր Ցինանց։ | 22 |
| 18 | Գշ. դֆ. 31. օր Ցինանց։ | 23 |
| 19 | Դշ. դէ. 32. օր Ցինանց։ | 24 |
| | ☾ Վր. քռ. լս. Առաջնորդ եգ. | |
| 20 | Եշ. ոֆ. 33. օր Ցինանց։ | 25 |
| 21 | Ուր. ոէ. 34. օր Ցինանց։ | 26 |
| 22 | Շբ. բֆ. 35. օր Ցինանց։ | 27 |
| 23 | ✠ Կիր. բէ. 36. օր Ցինանց։ Զ. Կիւրակի։ | 28 |
| 24 | Բշ. գֆ. 37. օր Ցինանց։ | 29 |
| 25 | Գշ. գէ. 38. օր Ցինանց։ | 30 |
| | ◎ Նն. լս. Ախոջծնի եգ. | |
| 26 | Դշ. դֆ 39. օր Ցինանց։ | 1 |
| 27 | ✠ Եշ. դէ. 40. օր Ցինանց։ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ ՔՐԻՍՏՈՍԻ. (վիճակ)։ Եւս Լատ. Յ. և Ռուսաց։ | 2 |
| 28 | Ուր. ոֆ. 41. օր Ցինանց։ Պահք։ | 3 |
| 29 | Շբ. ոէ. 42. օր Ցինանց։ | 4 |
| 30 | ✠ Կիր. բֆ. 43 օր. Ցինանց: | 5 |
| 31 | Բշ. բէ. 44. օր Ցինանց։ | 6 |

—

Այս ամսուայ 1-ից մինչև 31-ը օրն աւելացել է 1 ժ. 17 րոպէ։

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека
7/XI. 1922
Мясницкая
ՅԱՆԻ ԱՆՎԱՆ





# ՅՈՒՆԻՍ

Յունիս (լատին. Iunius) ամիսը Հռովմայեցւոց մէջ իւպատիւ պատոնեաց նուիրուած էր հպարտութեան չաստուածուհուն—Սատուռնոսի դուստր Յունոնային (Հէրա), որից և ստացել է իւր անունը։ Բացի դրանից juniores բառը լատիներէն նշանակում է «երիտասարդութիւն» երևի իբր տարուայ բնութեան երիտասարդ եղանակի յիշատակ. ամառուայ առաջին և Հռոմուլոսի կարգած չորրորդ ամիսն էր։ Այս ամսին մեր նախնիքն անուանում էին Մարգաց։ Երևի մարգագետիններ հնձելու ամիս, ինչպէս հայոցդրացի վրացիք այժմ էլ անուանում են այս ամսին Թիբաթվէ, որ կը նշանակէ խոտ հնձելու ամիս։

## ԱՍՏՂԱԳԻՏՆԵՐԻ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ

ՅՈՒՆԻՍ.—Խեցգետինն։ Այս համաստեղութեան տակ ծնուածը լինում է վիճասէր, կամակոր, խորամանկ, մոլի և ամեն դէպքում աւելի իւր ինքնահաճոյքին և ցնորքներին հետևող՝ քան առողջ դատողութեանը լսող։

Իսկ այս համաստեղութեան տակ ծնուած աղջիկն ինքնասէր է, գործունեայ, աշխատասէր, զգոյշ, արթուն, ամօթխած, հետաքրքիր, ինքնահաւան և մի քիչ ստախօս։

Յունիսին ծնուածներն առհասարակ աչքի են ընկնում իրենց ուժիմ և սրամիտ բնաւորութեամբ։ Ուրիշի սեպհականութիւնից հարստացող են և նշանաւոր մարդկանցից պաշտպանութիւն գտնող։ Գինուց միայն զգուշանալու են։

# ՅՈՒՆԻՍ

## 30 ՕՐ

| 0 | | Ն |
|---|---|---|
| 1 | Գշ. ֆյ. 45. օր Ցինանց։ | 7 |
| | ☾ Առ. քս. լս. Անջրեւ | |
| 2 | Դշ. ֆն. 46. օր Ցինանց։ Պահք. | 8 |
| 3 | Եշ. փյ. 47. օր Ցինանց։ | 9 |
| 4 | Ուր. փն. 48. օր Ցինանց։ Պահք. | 10 |
| 5 | Շբ. տյ. 49. օր Ցինանց։ | 11 |
| 6 | ✠ Կիր. տն. Ցինեերորդ օր 'ի Զատկէն։ ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ (Պենտեկոստէ)։ Բարեկենդան Եղիական պահոց։ Ռուսաց և Յունաց նաև Պենտեկոստէ։ | 12 |
| 7 | Բշ. բյ. 2. օր Հոգեգալ. Պահք։ Ռուսաց՝ երկրորդ օր Հոգեգալս. | 13 |
| 8 | Գշ. բն. 3. օր Հոգեգ. Պահք։ | 14 |
| 9 | Դշ. ֆյ. 4. օր Հոգեգ. Պահք։ | 15 |
| | ☉ Արեգ. 'ի Խեցգետինն մտանէ 6 ժ. 28 ր. երեկ. Ամառնամուտ և արևադարձ. ցերեկն սկսանի կարճանալ—գիշերն երկարիլ։ | |
| | ☼ Լօ լս. Զատրնապար եզ. | |
| 10 | Եշ. ֆն. 5. օր Հոգեգ. Պահք։ | 16 |
| 11 | Ուր. փյ. 6. օր Հոգեգ. Պահք։ | 17 |
| 12 | Շբ. փն. 7. օր Հոգեգալստեան։ | 18 |
| 13 | ✠ Կիր. տյ. Ա. Կիր. Յարութեան։ Ցիշատակ Եղիայի Մարգարէին. Յեր. Նախատօնակ։ Հարանիք։ | 19 |
| 14 | Բշ. տն. Ս. կուսանացն Հռիփսիմեանց։ Ցերեկ. նախատօնակ։ | 20 |
| 15 | Գշ բյ. Ս. կուսանացն Գայանեանց։ | 21 |
| 16 | Դշ. ցն. Պահք։ Ցերեկոյեան նախատօնակ։ | 22 |
| 17 | Եշ ֆյ. Ս. Յովհաննու Կարապետին և Աթանագինէ եպիսկոպ. | 23 |
| | ☾ Վռ. քռ. լս. տեղ տեղ խոխոսրք։ | |

| 0 | | Ն |
|---|---|---|
| 18 | Ուր. ֆն. Պահք։ Ցերեկոյեան Նախատօնակ։ | 24 |
| 19 | ✠ Շբ. փյ. Ս. ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ մերոյ—Ելն 'ի Վիրապէն։ | 25 |
| 20 | ✠ Կիր. փն. Բ. Կիր. զկնի Հոգեգ. ՏՕՆ ԿԱԹՈՒՂԻԿԷ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ։ (Կատարի հանդէս յամենայն եկեղեցիս Հայաստանեայց)։ Հարսանիք։ | 26 |
| 21 | Բշ. տյ. Ս. մկն. Բենթղեհէմի, Ակակիոսի վկային, Մովկեմայ քահանային և Կոնտրատիոսի զինուորին։ | 27 |
| 22 | Գշ. տն. Ս. կուսանացն Նունեայ և Մանեայ։ | 28 |
| 23 | Դշ. բյ. Պահք։ | 29 |
| 24 | Եշ. բն. Ս. իշխանացն Սահակայ և Յովսէփայ և Ս. վկայյն Սարգսի և Բագոսի։ | 1 |
| | ⊛ Ծնունդն լս. Բոքխոսն եզ. | |
| 25 | Ուր. ֆյ. Պահք։ | 2 |
| 26 | Շբ. ֆն. Ս. ՆԵՐՍԻՍԻ ՄԵԾԻ հայրապետին մերոյ և Խադայ եպիսկոպոսին։ | 3 |
| 27 | ✠ Կիր. փյ. Գ. Կիր զկնի Հոգեգ. Բարեկենդան Ս. Լուսաւորչի պահոց։ | 4 |
| 28 | Բշ. փն. Պահք։ Ս. Եպիփանու Կիպրացւոյն, Բաբելայ հայրապ. և 3 աշակերտացն նորին։ | 5 |
| 29 | Գշ. տյ. Պահք։ Ս. Կոստանդիանոսի թագաւորին և մօրն նորա Հեղինէի։ Ռուսաց՝ Ս. Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի։ | 6 |
| 30 | Դշ. տն. Պահք։ | 7 |

—

Այս ամսուայ 1-ից մինչև 30ըօրը պակասել է 1 ժ. 24 րոպէ։



# ՅՈՒԼԻՍ

Յուլիսը Հռոմէական կարգադրած տարուայ ամառուայ երկրորդ ամիսն էր և համարվում էր — Հռոմուլոսեան — տարեշրջանի հինգերրորդ ամիսը։ Թէև այս ամիսը — Հռովմայ Գրիգոր VII պապի ժամանակ կազմեցին Գրիգորեան համարուած տոմարով, բայց այս Յուլիս — այսինքն լատ. Iulius ամիսը — իր անունը ստացել է Հռովմայեցւոց նշանաւոր կայսր Յուլիանոս Կեսարից, որը ծնուել է սոյն ամսուայ 4-ին։ Մարկոս Անտոնիոս եւսպետը այդ ժամանակ ի պատիւ Նրա այս ամիսը, Յուլիս անուանեց և Նրա հրամանով էլ ուղղելով օրացոյցը — Յուլիան տարեշրջան անուանեցին։ Մեր նախնիք այս ամսին անուանել են Հրոտից (երևի հուր արձակող կամ հրային, որովհետև տարուայ ամենաշոգ ամիսն է)։ Իսկ վրացիք անուանում են Մկաթաթվէ, որ նշանակում է արտը հնձելու ամիս.

## ԱՍՏՂԱԳԻՏՆԵՐԻ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ

ՅՈՒԼԻՍ.—Առիւծն։ Այս համաստեղութեան տակ ծնուած մարդն լինում է պարզասիրտ, համարձակ, քաջ, առատաձեռն, ազատամիտ, մեծահոգի և շատ անգամ հպարտ. իր ազնիւ հոգովը (բնաւորութեամբ) հակուած է դէպի բարեպաշտութիւն և ցաւակցութիւն։ Միևնոյն ժամանակ ծաղրասէր է, ուրիշներին զայրացնող ու կրքոտ։ Արտաքին գեղեցկութեան շնորհիւ, փափուկ սեռին հաճոյանալու կերպը գիտէ և երկար փաղաքշանքներ շռայլելուց յետոյ հասնում է իր նպատակին։

Իսկ ծնուած աղջիկը զուարթ է, շնորհալի, բարկացող, համարձակ, չարամիտ, վրիժառու, բայց սիրելի և իր սիրելիին անչափ մեծարող։

Յուլիսին ծնուածների ամենաբախտաւոր ժամանակն իրենց հասակի միջին տարիքն է և ամենայաջող ամիսն՝ օգոստոսը։ Ամենից վտանգաւոր տարին իրենց հասակի՝ 42-րդ տարին է, որ այդ ժամանակ պէտք է զգուշանալ։

# ՅՈՒԼԻՍ

## 31 ՕՐ

| Օ | | Ն |
|---|---|---|
| 1 | Եշ. ԺՅ. Պահք։ Ս. Թէոդիտոնի Գաղատացւոյն, Թալիլեայ բժշկին և 7 կուսանացն, որք 'ի յԱնկիւրեայ կատարեցան։ | 8 |
| | ◐ Առ. ք. լս. Տօփ եգ. | |
| 2 | Ուր. ԲԺ. Պահք։ Յերեկոյեան Նախատօնակ։ | 9 |
| 3 | ✠ Շբ. ԳՅ. Գիւտ Նշխարացն Ս. ԳՐԻԳՈՐԻ Լուսաւորչին մերոյ։ | 10 |
| 4 | ✠ Կիր. ԳԺ. Դ. Կիր. զկնի Հոգեգալստեան։ Հարսանիք։ | 11 |
| 5 | Բշ. ՏՅ. Ս. վկայիցն Անտոնեոսի, Թէոփիլոսի, Անիքտոսի և Փոտինոսի։ | 12 |
| 6 | Գշ. ՏԺ. Ս. Դանիէլի մարգարէին և երից մանկանցն-Սեդրակայ, Միսաքայ և Աբեդնագովի։ | 13 |
